ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.09.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/232

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.08.2021թ. թիվ 26/26-1/13363-2021 գրությամբ «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 17.08.2021թ. թիվ 1329 գրության հիման վրա, 23.08.2021թ. թիվ 26/26-1/13363-2021 գրությամբ նախաձեռնել է «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/232 ընթացակարգի շրջանակներում 27.08.2021թ. ժամը 09:30-ին և 01.09.2021թ. ժամը 09:17-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի կարիքների համար սույն թվականի հուլիսի 14-ին «ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-21/32» ծածկագրով հայտարարվել էր գնանշման հարցում՝ «Հրազդան համայնքի խաղահրապարակների կառուցման, թիվ 2 երաժշտական դպրոցի տանիքի և միջանցքի վերանորոգման, Վանատուր թաղամասի մշակույթի տան տանիքի վերակառուցման» աշխատանքների ձեռքբերման նպատակով:

Հայտերը բացվել են հրավերով սահմանված օրը և ժամին www.armeps.am կայքի միջոցով:

Հայտերի բացման ընթացքում պարզ դարձավ, որ գնման ընթացակարգի մասնակից Ընկերության հայտում բացակայում էր հայտի ապահովումը և իր կողմից լրացված-հաստատված ծավալաթերթ-նախահաշիվը, ուստի ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով, գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց գնահատող հանձնաժողովի նիստը՝ Ընկերությանը ծանուցելով շտկել անհամապատասխանությունը:

Վերջինիս կողմից չի շտկվել անհամապատասխանությունը, ուստի Ընկերության հայտը գնահատվեց անբավարար և մերժվեց:

Խնդրում ենք Ձեր հանձնարարությունը՝ կիրառելու համապատասխան գործողություններ վերջինիս ներառելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/232 ընթացակարգի շրջանակներում 27.08.2021թ. ժամը 09:30-ին և 01.09.2021թ. ժամը 09:17-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/232 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/232 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի կողմից հայտարարվել է «ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-21/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ի հայտում բացակայում է հայտի ապահովումը և ծավալաթերթ-նախահաշիվը և նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանը առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 23.07.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.07.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել անհամապատասխանությունները և որոշում է կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.08.2021թ. թիվ 26/26-1/13363-2021 գրությունը, ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի 17.08.2021թ. թիվ 1329 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում,</u>*** որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ

կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում:*** Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտի ապահովում*** կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահա տող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ՝*** հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում՝ կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.4-րդ ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը հայտով ներկայացնում է*** շինարարական աշխատանքների գնման դեպքում

<u>իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ</u>, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները:...

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ</u>***՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***<u>ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության

հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: <u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի կողմից հայտարարվել է «ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-21/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ի հայտում բացակայում է հայտի ապահովումը և ծավալաթերթ-նախահաշիվը և նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանը առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 23.07.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.07.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել անհամապատասխանությունները և որոշում է կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում***

արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը ոչ միայն Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի համաձայն՝ ի սկզբանե հայտ ներկայացնելիս հայտին կից չի ներկայացրել հայտի ապահովումը, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.4-րդ ենթակետի համաձայն՝ իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը, այլև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություններ արձանագրելուց և Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցելուց հետո ևս սահմանված ժամկետում չի ներկայացրել Ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ ***մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը*** կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, գտնում եմ, որ ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ն «ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-21/32» ծածկագրով

ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.08.2021թ. թիվ 26/26-1/13363-2021 գրությամբ «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և և «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**